

ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՐՕՆ ԱՐԵՂԱՅԻ

Շաբաթ, 12 Յունիս 1976, կէսօրէ ետք, Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուած Հոգեգալստեան Հանդիսաւոր նախատօնակէն ետք, Հանդիսապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան կատարեց քահանայական կոյման արարողութիւնը Ս. Աթոռոյս Ընծայարանի Ամբիկիւհայ ուսանող Բարշ. Պարոյր Սրկ. Մելգոնեանի, Խարտաւիրակն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գարիկեան, իսկ առնթրեականներն էին Հոգշ. Տ. Գեղարզ Արդ. Տաւուսլարեան և Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պայեան: Արարողութեան աւարտին, ուխտադիրք արտասանեց Հայաստանեայց Ս. Եկեղեցիի Դուանանքը, Ս. Գրիգոր Տաթևացիէն սահմանուած:

Կիրակի, 13 Յունիս 1976, Հոգեգալստեան տօնին օրը, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւաղ Սեղանին վրայ Հանդիսաւոր Ս. Պատարազ մատուց ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան, քարոզեց՝ ընթան ունենալով Մասթէրոսի Աւետարանին ճշմարիտ պէտքերը, զորոքեց զոր ըմպելոց եմք Քրիստոսի հարցումը, ուղղութեամբ Զերեթեան եղբայրներուն, և կատարեց Պարոյր Սրկ. Մելգոնեանի քահանայական օծումն ու ձեռնադրութիւնը: Օրուան Հանդիսապետն էր Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրը:

Նորընծան առաջնորդուեցաւ Ս. Խորանին առջև, ապա առնթրեակայ Հոգեշնորհ Հայրերուն առաջնորդութեամբ և ծնրադիր՝ ան րարձրացաւ Խորան, ուր, դառնալով ժողովուրդին, աշխարհէն և աշխարհիկ կեանքէն հրաժարեցաւ:

«Ողջոյն»էն առաջ, նորընծան ծնրադրեց ձեռնադրիչ Գերշ. Սրբազանին առջև, և ընդունեց սև փիտոն, սաղաւարտ, փորուրար, շուրջաւոր: Ապա, մինչ դպիրներ «Խորհուրդ խորին»ը կ'երգէին, նորընծան զոք վարագոյրէն ետև դընստաւորուեցաւ:

Պատարագիչ Սրբազանը Ս. Միւռնոյի օծեց նորընծայի ճակատն ու ձեռքը, և զայն վերակոչեց Տ. Հայկազուն Արքեպս: Քիչ ետք, ան իր հոգեւոր հօրմէն ստացաւ Սուրբ Սկիւր, որ խորհրդանշէ Ս. Պատարազ մատուցանելու իշխանութեան, և ժողովուրդին զառնալով սուտաւ իր առաջին օրհնութիւնը:

«Ողջոյն»ի պահուն Պատարագիչ Ս. Հայրը, ինչպէս նաև Ս. Յակոբեանց Միարանութեան անդամները ողջագործուեցան նորընծայ Տ. Հայկազուն Արքեպսին հետ:

Ս. Պատարագի մերջաւորութեան, մինչ նորընծան դասին մէջ կեցած Աւետարանէն լուռ ընթերցում կ'ընէր, հաւատացեալներն աղանձաբոյր կատարեցին:

Իսկ նոյն օրը, Երեկոյեան ժամերգութեան աւարտումէն ետք, ձեռնադրիչ Սրբազան Հայրը, յետ աղօթքներու և Ս. Գրոց ընթերցումներու, նորընծային զլուխէն վերցուց սարկաւազական գդակը, զայն փոխարինելով մեղարոյ:

Իրիկունը, Վանքի սեղանատան մէջ տրուած Միարանական ընթերցին նախագահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, իր շուրջ ունենալով Միարանութեան անդամներն ու ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի ուսանողները:

Ընթերցի ընթացքին խօսք առաւ նորընծայ Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Մելգոնեան, և ըստ ի մէջի տլոց:

«Հնախառնի Ամերիկահայ դադութի հրամայական կարիքներուն և նոր սերունդի դաստիարակման հսկայական պահանջներուն, որոշած և՛ և՛ ամբողջ Միաբանութեան առջև կ'ուխտեմ փնտլել այս Սուրբ Աթոռի կամարներուն ներքեւ, և որքան որ կարողութիւնս կը ներէ՝ նուիրուիլ անոր բարգաւաճումին: Մյս քայլով կ'ուզեմ շնորհել Ամերիկահայ Հասարակութեան՝ Հայ Երուսաղէմի պատմական կարևորութիւնը և անոր մեծ դերը: Սփիւռքահայութիւնը շատ բան կը պարտի Երուսաղէմի: Հոս դաստիարակուած հոգևորականներն են որ այսօր կը վարեն Հայ դադութները, բայց սփիւռքը բաւարար չափով չի գիտակցիր Երուսաղէմի հոնգէպ իր պարտքին: Ես կը խոստանամ ըլլալ այդ կամուրջը զօրացնողներէն մինն»:

Մերջաւորութեան, խոսք տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, որ յորդորական իր խրատները տալէ ետք շնորհաւորեց Հ. Հայկազուն Արեղան, ապա օրհնեց սեղանը:

Ապա նորընծայ Տ. Հայկազուն Արեղան իր վարժիչին՝ Հոգւ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտարեանին կողմէ առաջնորդուեցաւ Ս. Հրեշտակապետաց ժողով, հոն տեղեկութիւն տուաւ քառասնօրեայ առանձնութեան և աղօթքի շրջանը:

* * *

«ՍԻՈՆ», այս առիթով քերականութիւն կը շնորհակալուի Տ. Հայկազուն Արեղան, անոր ցանկալով յաջողութիւն իր Եւրոպայի ասպարէզին մէջ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՄԵՐ

Հոգւ. Հայկազուն Արդ. Մելգոնեան ծնած է 1949ին Տիթրոյթ (Միաց-ւալ Նահանգներ), որդին Տէր և Տկն. Պարոյր Մելգոնեանի:

Նախնական և երկրորդական կրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, ընդունուած է Համալսարան և 1972ին Wayne State University-էն ստացած Պատմութեան Արուեստից Խիտղոսը Աշխարհագրութեան և Պատմութեան ճիւղերէն: Իսկ 1974ին ստացած է Մագիստրոսի Խիտղոսը Ուսուցչութեան մէջ, իր մասնագիտութիւնը ըլլալով Խորհրդատուութիւն (Counselling) և Լեզուաբանութիւն:

Հոգւ. Տ. Հայկազուն Արեղայ Տիթրոյթի աղքատիւ-եկեղեցական կեանքին մասնակցած է պատանութենէն: Մօտաւորապէս ութ տարի ուսուցիչ եղած է Տիթրոյթի Կիրակնօրեայ վարժարանին, նաև չորս տարի՝ նոյն քաղաքի Հայկական դպրոցին: Տասնչորս տարի պաշտօնավարած է A.C.Y.O.A.-ի տեղական վարչութեան մէջ, երրորդ իրրև ատենապետ. նմանապէս անդամակցած է նոյն կապակցութեան Կեդրոնահոն Վարչութեան:

1969-1970 եղած է Ս. Էմիլիանի Հոգևոր ձեմարանի ուսանող:

1974ի աշնան եկած է Երուսաղէմ և ընդունուած Ժառանգաւորաց Վարժարան և Ընծայարան որպէս յատուկ ուսանող, մասնագիտանալու Հայագիտական նիւթերու մէջ: Երկու տարիէ ի վեր հոն կը պաշտօնավարէ իբրև ուսուցիչ աշխարհադպրութեան և անգլիերէն խօսակցութեան: Վերջին չրջանին պատրաստած է աշխարհադպրութեան երկնգունեան դասագիրք մը, ինչպէս նաև Ամերիկահայ եկեղեցիներու մէջ մոմակալներու դործածութեան համար ձեռնարկ մը, դարձեալ երկնգունեան: